ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

11.04.2013թ.
200-ի 5

Կենտրոն համատիրության նախագահ
պարոն Կարեն Առաքելյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Առաքելյան,

Տիգրան Մեծ պ. 39 շենքի վերելակի կողային փայտյա շրջանակները բացակայում են, ինչի արդյունքում բացվել է աղբահանության խողովակը: Արդյունքում, շենքում առաջացել են սանիտարահիգիենիկ վատ պայմաններ: Շենքի բնակիչները դիմել են Կենտրոն համատիրությանը, որտեղից էլ խոստացել են խնդիրը լուծել, վերականգնել վերելակի կողային փայտյա շրջանակները: Սակայն, որեւէ աշխատանք չէր իրականացվել: 2012թ.-ի նոյեմբերի 22-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Տիգրան Մեծ պ. 39 շենքի բնակիչների խնդրանքով տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր Ձեզ եւ խնդրել էր հայտնել.

1. Նախատեսվու՞մ է արդյոք վերականգնել/վերանորոգել Տիգրան Մեծ պ. 39 շենքի վերելակի կողային փայտյա շրջանակները:
2. Եթե այո, ապա ե՞րբ:

2012թ.-ի նոյեմբերի 30-ին համատիրությունը տրամադրեց պատասխան՝ հայտնելով, որ Տիգրան Մեծ պ. 39 շենքի վերելակի կողային փայտյա շրջանակների տեղադրման աշխատանքները հաշվառված են եւ կիրականացվեն տասնհինգօրյա ժամկետում: Այն է, վերելակի կողային փայտյա շրջանակները, ըստ համատիրության պատասխանի՝ պետք է տեղադրվեին մինչեւ 2012թ.-ի դեկտեմբերի 15-ը: Ձեր պատասխան գրությունից անցել է ավելի քան 4 ամիս, սակայն գրությամբ վկայակոչված աշխատանքները դեռեւս չեն իրականացվել:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել.

1. Ինչու՞ չեն իրականացվել Տիգրան Մեծ պ. 39 շենքի վերելակի կողային փայտյա շրջանակների տեղադրման աշխատանքները (աշխատանքները չիրականացնելու պատճառները),
2. Ե՞րբ են իրականացվելու վերոնշյալ աշխատանքները (աշխատանքների իրականացման վերջնաժամկետը):

Միաժամանակ, խնդրում ենք հետեւողական լինել աշխատանքների կատարմանը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան